«Հաստատում եմ»

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»

Ինստիտուտի տնօրեն,

տեխն. գ. դ. պրոֆեսոր _____ Ռ. Ռ. Սահակյան

«20» 10 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» խորագրով ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 6, կայացած՝ 19.10.2023թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ. դոցենտ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի աշխատակիցներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ.գ.թ. դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Ն. Կոստանդյանը, Մ. Մազմանյանը, Մ. Շահվերդյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Ս. Բեժանյանը, Լ. Հարոյանը, Ա. Հարությունյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, դասախոս՝ Ա. Խաչատրյանը:

Ինքնագնահատումը, որպես անձի սեփական արարքների, բարոյական հատկությունների, համոզմունքների, մոտիվների բարոյական գնահատում, անհատի ինքնագիտակցության և խղճի դրսևորումներից մեկն է, որը մարդու մեջ ձևավորվում է բարոյական դաստիարակության գործընթացում: Ուստի արդիական է անձի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի ուսումնասիրումը:

Ատենախոսը հիմնավորել է թեմայի ընտրությունը, հետազոտության արդիականությունը, ներկայացրել նպատակը, խնդիրները, ընդգծել գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունները: Ներածության մեջ գիտական հիմնավորումներով շարադրված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 141 համակարգչային էջ:

Ատենախոսության առաջին **«Սովորողի ինքնագնահատման հիմնախնդիրը մանկավարժության մեջ»** գլխում ատենախոսը վերլուծել է հայ և արտասահմանյան մանկավարժների հայացքները անձի, մասնավորապես դպրոցականի ինքնագնահատականի, նրանց ինքնագնահատման չափանիշների և բնութագրիչների վերաբերյալ դիրքորոշումները:

Ատենախոսության նույն գլխում ներկայացվել են նաև կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի առանձնահատկություններն ու դրդապատճառները: Ատենախոսը կարևորել է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի հիմքում ընկած ուսումնական գործունեությունը խթանող ուսումնաճանաչողական, բարձր վարկանիշային ձգտման, անհաջողություններից խուսափելու, փոխհատուցման դրդապատճառները:

Երկրորդ **«Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման մանկավարժական պայմանները»** գլխում ատենախոսը դիտարկել է ինքնագնահատականի էությունն ու նրա վրա ազդող հիմնական գործոնները, կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ազդեցությունը նրա առողջության վրա, ինչպես նաև կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպման մանկավարժական պայմանները:

Հայտնի մանկավարժների, հոգեբանների ուսումնասիրությունների, դրանց արդյունքների հիման վրա իրականացրած դիտարկումների, ինչպես նաև ուսուցչական փորձի և ուսումնասիրությունների հիման վրա առանձնացվել է կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները: Վերլուծվել է նաև կրտսեր դպրոցականի առողջության և ինքնագնահատականի առնչությունները՝ հիմնավորելով, որ մանկավարժության, հոգեբանության, առողջապահական գիտություններում, ընդհանրապես

մանկավարժական առողջագիտության մեջ ամենատարբեր տեսանկյուններից կարևորվում է երեխաների առողջության պահպանման հիմնախնդիրը:

Երրորդ **«Կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման ժամանակակից պրակտիկան տարրական դպրոցում»** գլխում ներկայացվել է կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման գործընթացի կազմակերպմանն առնչվող ուսուցչի կոմպետենցիաները:

Այս գլխում դիտարկվել են Վ. Գ. Շչուրի «Աստիճանասանդուղք» մեթոդիկայի միջոցով կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության ստուգման ընթացքն ու արդյունքները: Ատենախոսը եկել է այն եզրակացության, որ աշակերտների ցածր ինքնագնահատականն ունի բազմաթիվ պատճառներ, դրանց բացահայտման և անհրաժեշտ աջակցության ցուցաբերման համար կարևոր է մանկավարժների և ծնողների համատեղ գործունեությունը:

Ատենախոսության 3-րդ գլխում ներկայացվել են նաև ծնող–աշակերտ «Զուգահեռ հարցման» մեթոդով իրականացրած հարցախույզի արդյունքները:

Այս գլխում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ատենախոսը ներկայացրել է մեթոդական համալիր, որի բաղադրիչները մեծապես նպաստում են կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորմանը: Մեթոդական համալիրի նպատակն է կրտսեր դպրոցականների ինքնագնահատման կարողության և համապատասխան վարքի ձևավորումն ու սեփական զարգացման գործընթացում դրա կարևորության ու անհրաժեշտության գիտակցումը:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք համապատասխանում են աշխատանքի նպատակին, խնդիրներին, պաշտպանության ներկայացվող դրույթներին:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործնական արժեքը, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

1. Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը հստակ տարանջատեր «ինքնագնահատում» և «ինքնագնահատական» հասկացությունները,

2. տեղին չէ 6-րդ էջում թվարկված տնտեսական և գործնական 3-րդ հակասության մեջ «դաստիարակ» և «կրթության պատասխանատուների ոչ համարժեք կարողություններ» ձևակերպումների օգտագործումը, ինչպես նաև 7-րդ էջում թվարկված 4-րդ հակասության մեջ կարծում ենք, որ «ազգային հոգեկերտվածքում առկա մի շարք մոտեցումների անառարկելի ընդունման և կիրառման սովորությունները» չեն կարող հանդիսանալ կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման խոչընդոտ և դիտարկվել որպես հանրակրթության մեջ առկա տնտեսական կամ գործնական հակասություն,
3. կարծում ենք, որ 37-րդ էջում ներկայացված առանձնահատկությունը, այն է՝ «կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի վերաբերյալ շրջապատի և իր՝ սեփական կարծիքները ոչ միշտ են համընկնում» բնորոշ է բոլոր տարիքային խմբերին,
4. գտնում ենք, որ 39-րդ էջում նշված «կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի վրա ազդում է ոչ այնքան ուսումնական գործընթացում նրա ստացած գնահատանիշը, որքան դրա շուրջ ուսուցչի մեկնաբանություններն ու դասընկերների արձագանքը» առանձնահատկությունը կարող էր հիմք հանդիսանալ նաև ձևավորող գնահատման համակարգի հետազոտությունների համար, ինչն ատենախոսությունն առավել արդիական և հանրաշահ կդարձներ,
5. 54-րդ էջում ներկայացված հղումներում աղբյուրների էջերը նշված չեն,
6. աշխատանքում առկա են նաև տպագրական վրիպակներ:

Վերոնշյալ նկատառումները չեն արժեզրկում աշխատանքի գիտականությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունն ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս եզրակացնել,

որ Աննա Գրիշայի Գալստյանի «Կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսությունն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
Մ. գ. թ., դոցենտ _____ Լ. Գ. Բաղդասարյան

Լ. Գ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՎՊՀ-ի գիտքարտուղար,
Մ. գ. թ., դոցենտ _____ Ս. Ս. Բեժանյան